«Տրիո էքստրա» ծառայությունների փաթեթի պայմաններ

1. «Տրիո էքստրա» ծառայությունների փաթեթի պայմաններ

«Տրիո էքստրա»-ն ծառայությունների փաթեթ է, որի կազմում ներառված է երեք ծառայություն՝ «Լայնաշերտ ինտերնետ», «Սմարթ հեռուստատեսություն» և «Ֆիքսված հեռախոսակապ»[1]:

Աղյուսակ 1. «Տրիո էքստրա» ծառայությունների փաթեթի գնացուցակ՝ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած մինչև բաժանորդագրության 6-րդ օրացուցային ամիսը ներառյալ:

Ծառայությունների փաթեթ էքստրա[2]	Մարզային[3]	Սիրողական	Ընտանեկան	Միասնական	Անվանական
Հիմնական ծառայություններ					
Ինտերնետի արագություն	12 Մբ/վ	20 Մբ/վ	25 Մբ/վ	40 Մբ/վ	50 Մբ/վ
Ներառված հեռուստաալիքների քանակ[4]	առնվազն 50	առնվազն 50	առնվազն 100	առնվազն 150	առնվազն 155
Անվճար բոպեներ ցանցի ներսում	0	500	500	500	700
Անվճար բոպեներ դեպի տեղական այլ ֆիսված ցանցեր	0	200	200	200	300
Հավելյալ ծառայություններ					
Մուլտիրում	հասանելի[5]	հասանելի	ներառված[6]	ներառված	ներառված
Մուլտիրում ծառայության Հավելյալ սմարթ սարք	հասանելի	հասանելի	հասանելի	հասանելի	ներառված մինչև 2 սարքավորում
SmartBox Wi-Fi	հասանելի	հասանելի	ներառված՝ SmartBox Wi-Fi 1,	ներառված՝ SmartBox Wi-Fi 1, SmartBox Wi-Fi 2	ներառված՝ SmartBox Wi-Fi 1, SmartBox Wi-Fi 2, SmartBox Wi-Fi 3
Եթերի տեսագրում (NPVR)	հասանելի	հասանելի	ներառված	ներառված	ներառված
Նախկին հաղորդումներ (TV on Demand) ծառայության տևողություն	7 օր	7 օր	7 օր	7 օր	7 օր
Հավելյալ արագություն	անհասանելի	անհասանելի	անհասանելի	անհասանելի	հասանելի

[1] «Տրիո Սիրողական», «Տրիո Ընտանեկան» և «Տրիո Միասնական» սակագնային փաթեթներով սահմանված հեռախոսակապի ծառայության պայմանները համընկնում են «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ գլխավոր տնօրենի և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ գլխավոր տնօրենի 26.02.16թ. 006-02/16-Հ3-Լ համատեղ հրամանով սահմանված «Ֆիքսլայն Այո» սակագնային փաթեթի պայմանների հետ, իսկ «Տրիո Անվանական» սակագնային փաթեթով սահմանված հեռախոսակապի ծառայության պայմանները համընկնում են «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 26.02.16թ. 006-02/16-Հ3-Լ, հրամանով սահմանված «Ֆիքսլայն Զրույց» սակագնային փաթեթի պայմանների հետ:

[2] «Տրիո էքստրա» ծառայությունների փաթեթի ալիքները հաստատուն չեն և կարող են փոփոխվել Օպերատորի կողմից ցանկացած պահի:

[3] «Տրիո Մարզային» սակագնային փաթեթի պայմանները չեն գործում Երևան քաղաքում:

[4] «Տրիո Սիրողական», «Տրիո Ընտանեկան» և «Տրիո Միասնական» սակագնային փաթեթներում ներառված հեռուստաալիքների ցանկը համընկնում է «Սմարթ Մեկնարկային», «Սմարթ Հիմնական», «Սմարթ Ամբողջական» սակագնային փաթեթներում ներառված հեռուստաալիքների ցանկի հետ համապատասխանաբար:

[5] Եթե որևէ հավելյալ ծառայություն հասանելի է, ապա հնարավոր է ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում՝ վճարելով սահմանված ամսավճարը:

[6] Եթե որևէ հավելյալ ծառայություն ներառված է, ապա տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում տվյալ հավելյալ ծառայության համար չի գանձվում սահմանված ամսավճարը:

Առանձին հեռուստաալիքներ	հասանելի	հասանելի	հասանելի	հասանելի	հասանելի
Թեմատիկ փաթեթներ	հասանելի	հասանելի	հասանելի	հասանելի	հասանելի
Ամսավճար[7]	**8500 դրամ**	**10000 դրամ**	**12500 դրամ**	**16000 դրամ**	**20000 դրամ**

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

Աղյուսակ 2. «Տրիո Էքստրա» ծառայությունների փաթեթի գնացուցակը բաժանորդագրության 7-րդ օրացուցային ամսից մինչև 12-րդ օրացուցային ամիսը ներառյալ:

Ծառայությունների փաթեթ Էքստրա	**Մարզային**	**Սիրողական**	**Ընտանեկան**	**Միասնական**	**Անվանական**
Հիմնական ծառայություններ					
Ինտերնետի արագություն	12 Մբ/վ	20 Մբ/վ	25 Մբ/վ	40 Մբ/վ	50 Մբ/վ
Ներառված հեռուստաալիքների քանակ	առնվազն 50	առնվազն 50	առնվազն 100	առնվազն 150	առնվազն 155
Անվճար բոպեներ ցանցի ներսում	0	500	500	500	700
Անվճար բոպեներ դեպի տեղական այլ ֆիսված ցանցեր	0	200	200	200	300
Հավելյալ ծառայություններ					
Մուլտիրում	հասանելի	հասանելի	ներառված	ներառված	ներառված
Մուլտիրում ծառայության Հավելյալ սմարթ սարք	հասանելի	հասանելի	հասանելի	հասանելի	ներառված մինչև 2 սարքավորում
SmartBox Wi-Fi	հասանելի	հասանելի	ներառված՝ SmartBox Wi-Fi 1,	ներառված՝ SmartBox Wi-Fi 1, SmartBox Wi-Fi 2	ներառված՝ SmartBox Wi-Fi 1, SmartBox Wi-Fi 2, SmartBox Wi-Fi 3
Եթերի տեսագրում (NPVR)	հասանելի	հասանելի	ներառված	ներառված	ներառված
Նախկին հաղորդումներ (TV on Demand) ծառայության տևողություն	7 օր	7 օր	7 օր	7 օր	7 օր
Հավելյալ արագություն	անհասանելի	անհասանելի	անհասանելի	անհասանելի	հասանելի
Առանձին հեռուստաալիքներ	հասանելի	հասանելի	հասանելի	հասանելի	հասանելի
Թեմատիկ փաթեթներ	հասանելի	հասանելի	հասանելի	հասանելի	հասանելի
Ամսավճար[8]	**9000 դրամ**	**10500 դրամ**	**13000 դրամ**	**16500 դրամ**	**20500 դրամ**

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

2. **Բաժանորդագրության օրացույցային ամսից սկսած «Տրիո Էքստրա» ծառայությունների փաթեթի համար գործում է սույն պայմանների կետ 1-ի Աղյուսակի 1-ում սահմանված գնացուցակը:**

«Տրիո Էքստրա» ծառայությունների փաթեթը բաղկացած է «Տրիո Մարզային», «Տրիո Սիրողական», «Տրիո Ընտանեկան», «Տրիո Միասնական», «Տրիո Անվանական» սակագնային փաթեթներից:

«Տրիո Էքստրա» ծառայությունների փաթեթին հնարավոր է բաժանորդագրվել բացառապես 1 տարվա ժամկետային պայմանագրով և Բաժանորդը պարտավորվում է Ծառայության ակտիվացման օրվանից 1 տարի (365 օր) շարունակ օգտվել **«Տրիո Էքստրա»** ծառայությունների փաթեթից:

i. **«Տրիո Էքստրա»** ծառայությունների փաթեթին բաժանորդագրության դեպքում՝

- Wi-Fi Սարքի օգտագործման իրավունքը ներառվում է **«Տրիո Էքստրա»** ծառայությունների փաթեթում (Wi-Fi Սարքը տրամադրվում է առանց վճարի գանձման)[9],
- Բաժանորդը ստանում է իր սակագնային փաթեթի պայմաններով սահմանված ինտերնետի հիմնական արագության համեմատ եռակի ավելի բարձր արագություն պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարի շարունակ (եթե Բաժանորդը օգտվում է «Հավելյալ արագություն» ծառայությունից, ապա եռապատկվում է **«Տրիո Էքստրա»** ծառայությունների փաթեթի հիմնական պայմաններով սահմանված ինտերնետի արագությունը, իսկ արդեն իսկ ակտիվացված «Հավելյալ արագություն» ծառայության շրջանակներում տրամադրվող արագությունը գումարվում է **«Տրիո Էքստրա»** ծառայությունների փաթեթի շրջանակներում եռապատկված արագությանը):
- Սակագնային փաթեթում ներառվում է «Հատուկ 30» հեռուստաալիքների փաթեթը պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարի շարունակ:
- Օպերատորի կողմից տրամադրվող հեռուստաալիքների ցանկից Բաժանորդի ընտրությամբ 15 հեռուստաալիք ձեռք բերելու հնարավորություն՝ առանց վճարի գանձման10
- «Անսահմանափակ սերիալներ» սերիալների փաթեթն առանց վճարի գանձման[11]

---

[10]Սույն պայմանների շրջանակում Օպերատորի կողմից տրամադրվող հեռուստաալիքների ցանկից (այն հեռուստաալիքների, որոնք հասանելի են ընտրովի սկզբունքով) Բաժանորդի կողմից ակտիվացված առաջին 15 (տասնհինգ) հեռուստաալիքները (ներառյալ գործող Բաժանորդի կողմից մինչև սույն պայմաններով միանալն արդեն իսկ ակտիվացված ալիքները, որոնց քանակը չի գերազանցում 15-ը) տրամադրվում են առանց վճարի գանձման՝ հիմնական Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարվա ընթացքում: Սա նշանակում է, որ սույն պայմաններով և հերթականությամբ առաջին 15 ակտիվացված բոլոր հեռուստաալիքների համար առանց վճարի գանձման ժամանակահատվածի վերջնաժամկետը լրանում է միևնույն օրը՝ անկախ նրանից, թե տվյալ հեռուստաալիքը երբ է ակտիվացվել: Սույն կետով սահմանված կարգով առանց վճարի գանձման հեռուստաալիքների ցանկում կարող են ներառվել միայն առանձին հեռուստաալիքները և չեն կարող ներառվել ակտիվացված թեմատիկ փաթեթի կամ այլ հավելյալ փաթեթի կազմում ներառված հեռուստաալիքները: Առանց վճարի գանձման հնարավորությամբ ակտիվացված հեռուստաալիքների թիվը կարող է լինել 15-ից քիչ, բայց չի կարող լինել ավելի, քան 15 հատ: Եթե Բաժանորդի մոտ սույն պայմաններով արդեն իսկ ակտիվացված են ավելի քան 15 հավելյալ հեռուստաալիք, ապա սկսած 16-րդ հավելյալ ակտիվացված հեռուստաալիքից, յուրաքանչյուր առանձին ակտիվացված հեռուստաալիքի համար սահմանված ամսավճարը գումարվում է տվյալ սակագնային փաթեթի ամսավճարին: Եթե Բաժանորդը ապաակտիվացնում է առանց վճարի գանձման հնարավորությամբ իր 15 հավելյալ հեռուստաալիքներից մեկը կամ մի քանիսը և այդ պահին ունենում է Վճարովի հեռուստաալիք/հեռուստաալիքներ, ապա ավտոմատ կերպով սույն կետով սահմանված ապաակտիվացված առանց վճարի գանձման հեռուստաալիքի/հեռուստաալիքների դիտման հնարավորությունը փոխանցվում է այն Վճարովի հեռուստաալիքին/հեռուստաալիքներին, որը/որոնք տվյալ պահին ակտիվ Վճարովի հեռուստաալիքների ցանկում հերթականության սկզբունքով ակտիվացվել է/ակտիվացվել են առաջինը՝ավելի շուտ: Սույն պայմանների շրջանակում հիմնական Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարի (365 օր) հետո առանց վճարի գանձման տրամադրված (թվով՝ մինչև 15) հեռուստաալիքները կշարունակեն մնալ ակտիվ և դրանց մատուցման դիմաց ավտոմատ կերպով կսկսի հաշվարկվել սահմանված ամսավճարը: Եթե որևէ հեռուստաալիք Օպերատորի մեկ այլ առաջարկի շրջանակում տրամադրվում է առանց վճարի գանձման, ապա այն չի ներառվում սույն առաջարկի շրջանակում տրամադրվող առանց վճարի գանձման ալիքների ցանկում, եթե նույնիսկ այն ձեռքբերման հերթականության սկզբունքով ներառվում է առաջին 15 հեռուստաալիքների ցանկում: Եթե Բաժանորդն ակտիվացնում է որևէ հավելյալ փաթեթ, որի մեջ ներառվում է սույն պայմաններով սահմանված կարգով առանց վճարի գանձման ակտիվացված հեռուստաալիքներից մեկը (մի քանիսը), ապա տվյալ ալիք(ներ)ը դուրս է(են) գալիս սույն պայմաններով սահմանված առանց վճարի գանձման տրամադրվող հեռուստաալիքների ցանկից:

[11]Սույն պայմանների շրջանակում Բաժանորդը հնարավորություն է ստանում իր սակագնային փաթեթով սահմանված Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 30 օրվա ընթացքում (ներառյալ Ծառայության հնարավոր կասեցման ժամանակահատվածը) 1 անգամ ակտիվացնել «Անսահմանափակ սերիալներ» սերիալների փաթեթը: Սույն կետում նշված ժամանակահատվածից հետո «Անսահմանափակ սերիալներ» սերիալների փաթեթն ակտիվացնելու դեպքում Բաժանորդը վճարում է «Անսահմանափակ սերիալներ» սերիալների փաթեթի համար սահմանված վճարը: Եթե Բաժանորդը ակտիվացնում է «Անսահմանափակ սերիալներ» սերիալների փաթեթը ՕԹԻԹի հաշվի ներքո, ապա հնարավորություն չի ունենում՝ օգտագործելու դրա մեջ ներառված դիտումներն ԱյՓի ԹիՎի հաշվի ներքո: Եթե Բաժանորդը ակտիվացնում է «Անսահմանափակ սերիալներ» սերիալների փաթեթն ԱյՓի ԹիՎի հաշվի ներքո, ապա հնարավորություն չի ունենում՝ օգտագործելու դրա մեջ ներառված դիտումներն ՕԹԻԹի հաշվի ներքո:

- «100 դիտում» ֆիլմերի փաթեթն առանց վճարի գանձման[12]

Wi-Fi Սարքի օգտագործման իրավունքը Բաժանորդի համար պահպանվում է նաև **«Տրիո Էքստրա»** ծառայությունների փաթեթին 1 տարով բաժանորդագրության պայմաններով սահմանված պարտադիր ժամկետի ավարտից հետո, եթե Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված Պայմանագիրը մնում է ուժի մեջ, և Wi-Fi Սարքը անհրաժեշտ է Բաժանորդին Ծառայություններ մատուցելու համար: Օպերատորի և Բաժանորդի միջև Պայմանագրի դադարեցման դեպքում (միակողմանի կամ երկկողմանի) Wi-Fi Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

«Տրիո Էքստրա» ծառայությունների փաթեթին բաժանորդագրության դեպքում պայմաններով սահմանված կարգով Ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման կամ վճարումների ուշացման պատճառով Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում սակագնային փաթեթին բաժանորդագրության ժամկետը երկարում է Ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ, սակայն չի երկարում սույն պայմանների 1.i. կետով տրամադրվող ինտերնետի եռապատիկ արագության, «Հատուկ 30» հեռուստաալիքների փաթեթի, «Անսահմանափակ սերիալներ» սերիալների փաթեթի, «100 դիտում» ֆիլմերի փաթեթի, ինչպես նաև 15 հեռուստաալիք՝ առանց վճարի գանձման հնարավորությունների տրամադրման ժամկետը:

«Տրիո Էքստրա» ծառայությունների փաթեթին բաժանորդագրության դեպքում պայմաններով սահմանված կարգով Ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման և/կամ վճարումների ուշացման պատճառով Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում Սակագնային փաթեթի պարտադիր բաժանորդագրության ժամկետը երկարում է Ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ, սակայն չի երկարում սույն պայմանների Աղյուսակ 1-ով սահմանված գնացուցակին համապատասխան Ծառայությունների մատուցման ժամկետը:

3. **Եթե** Բաժանորդը մինչև սույն պայմանների կետ 1-ում սահմանված կարգով միանալն արդեն իսկ ակտիվացրել է «Անսահմանափակ սերիալներ» սերիալների փաթեթը և/կամ «100 դիտում» ֆիլմերի փաթեթն, ապա միանալով ծառայություններին կետ 1-ում սահմանված կարգով, վերը նշված փաթեթների ակտիվ ժամանակահատվածում չի ստանում հնարավորություն կրկին ակտիվացնելու «Անսահմանափակ սերիալներ» սերիալների փաթեթը և/կամ «100 դիտում» ֆիլմերի փաթեթը: Ֆիլմերի փաթեթի ակտիվ ժամանակահատված է համարվում տվյալ փաթեթով սահմանված Դիտման առավելագույն ժամանակահատվածը կամ տվյալ փաթեթի ակտիվացման պահից սկսած մինչև տվյալ փաթեթով սահմանված առավելագույն քանակով ֆիլմերի դիտումը, եթե դա կատարվում է մինչև տվյալ փաթեթով սահմանված Դիտման առավելագույն ժամանակահատվածի ավարտը: Ֆիլմերի փաթեթի ակտիվ ժամանակահատվածի ավարտից հետո հնարավոր է կրկին ձեռք բերել «Անսահմանափակ սերիալներ» սերիալների փաթեթը և/կամ «100 դիտում» ֆիլմերի փաթեթը:

4. **Սակագնային փաթեթի փոփոխություն**

Եթե Բաժանորդը սույն պայմանների 1.i. կետում նշված կարգով ստացել է ինտերնետի եռակի արագացում և կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «Տրիո Էքստրա» ծառայությունների փաթեթի մեկ այլ սակագնային փաթեթի, ապա շարունակում է օգտվել ինտերնետի եռակի արագությունից մինչև դրա համար նախկին սակագնային փաթեթով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է, և անցումը կատարվում է մինչև ինտերնետի եռապատկված արագության գործողության վերջնաժամկետի ավարտը: Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի

[12]Սույն պայմանների շրջանակում Բաժանորդը հնարավորություն է ստանում իր սակագնային փաթեթով սահմանված ծառայությունների ակտիվացման պահից սկսած 30 օրվա ընթացքում (ներառյալ ծառայության հնարավոր կասեցման ժամանակահատվածը) 1 անգամ ակտիվացնել «100 դիտում» ֆիլմերի փաթեթն առանց վճարի գանձման: Սույն կետում նշված ժամանակահատվածից հետո «100 դիտում» ֆիլմերի փաթեթն ակտիվացնելու դեպքում Բաժանորդը վճարում է «100 դիտում» ֆիլմերի փաթեթի համար սահմանված վճարը: Եթե Բաժանորդը ակտիվացնում է ֆիլմերի փաթեթներից որևէ մեկն ՕԹԻԹի հաշվի ներքո, ապա հնարավորություն չի ունենում՝ դիտելու տվյալ ֆիլմերի փաթեթն ԱյՓի ԹիՎի հաշվի ներքո: Եթե Բաժանորդը ակտիվացնում է ֆիլմերի փաթեթներից որևէ մեկն ԱյՓի ԹիՎի հաշվի ներքո, ապա հնարավորություն չի ունենում՝ դիտելու տվյալ ֆիլմերի փաթեթն ՕԹԻԹի հաշվի ներքո:

փոփոխություն կատարելու դեպքում սույն պայմանների 1.i. կետով տրամադրված ինտերնետի եռապատիկ արագության պայմանը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում:
Եթե Բաժանորդը սույն պայմանների 1.i. կետում նշված կարգով ստացել է «Հատուկ 30» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթը և կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «Տրիո Էքստրա» ծառայությունների փաթեթի մեկ այլ սակագնային փաթեթի, ապա շարունակում է օգտվել «Հատուկ 30» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթից մինչև դրա համար նախկին սակագնային փաթեթով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է, և անցումը կատարվում է մինչև «Հատուկ 30» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթի տրամադրման գործողության վերջնաժամկետի ավարտը: Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի փոփոխություն կատարելու դեպքում սույն պայմանների 1.i. կետով տրամադրված «Հատուկ 30» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթի տրամադրման պայմանը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում:
Եթե Բաժանորդը բաժանորդագրվել է սույն պայմաններով և, չդադարեցնելով տարեկան բաժանորդագրությունը, կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցնելով «Տրիո Էքստրա» Ծառայությունների փաթեթի մեկ այլ սակագնային փաթեթի, ապա

- շարունակում է օգտվել սույն պայմանների 1.i. կետով տրամադրված «Անսահմանափակ սերիալներ» սերիալների փաթեթն ու «100 դիտում» ֆիլմերի փաթեթն առանց հավելյալ վճարի ակտիվացնելու հնարավորությունից և առանց վճարի գանձման իր ընտրությամբ Օպերատորի կողմից տրամադրվող հեռուստաալիքների ցանկից 15 հավելյալ հեռուստաալիք ձեռք բերելու հնարավորությունից՝ մինչև դրանց ակտիվացման համար ի սկզբանե սահմանված վերջնաժամկետի ավարտը (ներառյալ հնարավոր ժամանակավոր կասեցման ժամանակահատվածը)՝ անկախ նոր սակագնային փաթեթի ամսավճարի չափից:
- շարունակում է օգտվել սույն պայմանների շրջանակում արդեն իսկ ակտիվացված «Անսահմանափակ սերիալներ» սերիալների փաթեթից ու «100 դիտում» ֆիլմերի փաթեթից և Օպերատորի կողմից տրամադրվող ու իր կողմից ընտրված առանց վճարի գանձման հեռուստաալիքների ցանկից մինչև դրանցից օգտվելու համար ի սկզբանե սահմանված վերջնաժամկետի ավարտը՝ անկախ նոր սակագնային փաթեթի ամսավճարի չափից:

Եթե Բաժանորդը միացել է սույն պայմաններին ու կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցնելով մեկ այլ Ծառայության/Ծառայությունների փաթեթի, որի շրջանակում տրամադրվում է Սմարթ հեռուստատեսության Ծառայություն, ապա

- դադարում է օգտվել Օպերատորի կողմից առանց հավելյալ վճարի գանձման տրամադրվող ու իր ընտրությամբ ակտիվացված մինչև 15 հեռուստաալիքների ցանկից, սակայն շարունակում է օգտվել սույն պայմաններով տրամադրված ու արդեն իսկ ակտիվացված «Անսահմանափակ սերիալներ» սերիալների փաթեթից, «100 դիտում» ֆիլմերի փաթեթում ներառված դիտումներից՝ անկախ նոր սակագնային փաթեթի ամսավճարի չափից:

5. Գործող Բաժանորդն իրավունք ունի միանալ **«Տրիո Էքստրա»** ծառայությունների փաթեթին սույն պայմաններով սահմանված կարգով բացառապես վերակնքելով գործող տարեկան բաժանորդագրությամբ պայմանագիրը՝ համաձայն սույն սահմանված պայմանների:
6. **«Տրիո Էքստրա»** ծառայությունների փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդն օգտվել է մատուցված Ծառայություններից դրանց ակտիվացման օրվանից սկսած առնվազն 365 օրվա ընթացքում:
7. Եթե Բաժանորդը բաժանորդագրվել է **«Տրիո Էքստրա»** ծառայությունների փաթեթին մեկ տարով և Բաժանորդային պայմանագիրը լուծվում է մինչև **«Տրիո Էքստրա»** ծառայությունների փաթեթով սահմանված պարտադիր ժամկետի ավարտը անկախ այն հանգամանքից դա հետևանք է Օպերատորի կողմից Բաժանորդային պայմանագրի միակողմանի լուծման՝ Բաժանորդի կողմից Բաժանորդային պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման, թե Բաժանորդի կամահայտնությամբ, ապա Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ վճարել ընթացիկ պարտքը և տուգանք 15 000 ՀՀ դրամի չափով՝ դադարեցման օրվանից հաշված 10 օրվա ընթացքում:

8. **Այլ պայմաններ**

«Տրիո Էքստրա» ծառայությունների փաթեթի Բաժանորդները կարող են օգտվել Անվանափոխության, Հասցեի փոփոխության, Սակագնային փաթեթի փոփոխության, Հաշվի վերծանման, Ներբնակարանային/ներգրասենյակային տեխնիկական սպասարկման, Սարքի փոխարինման/Wi-Fi ակտիվացման ծառայություններից: